

Տ. ՄԵԼ-ՔԻՍԵՂԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒ- ՐԱՏԵԱՆՑ

(Գարեգին վարժապետ)

Ա. Նորա գործունէութիւնը Թիֆլիզում

Գարեգին (այսպէս է ի Տէր Հանգուցեալ Մելքիսեդեկ արքեպիսկոպոսի աշխարհական անունը) Մուրատեանցը ¹⁾ ծնուած է 1836 թուին Շամշադին գաւառի Տաւուշ (Թովուշ) գիւղում: Նորա հայրը նոյն գիւղի Տէր Գրիգոր քահանան է:

Նա իւր տարրական ուսումը ստացաւ իւր հօրից մայրական տանը, որ պատանի Գարեգինի մէջ ծնեցրեց

¹⁾ Մեր ձեռքին գտնուած մի փաստաթղթից երևում է, որ Թիֆլիսի Հայոց Վիճակային Կոնսիստորիայում 1842 թուին կազմած շտառի մէջ Գարեգին Մուրատեանցի հօր՝ Թովուշ գիւղի Տէր Գրիգորի մասին զրուած է եղել հետեւեալը. «Տէր Գրիգոր Մուրատեան Գեօրգինեանց ստացեալ է զլորս աստիճան՝ Վարդապետի ի ս. Նշանի վանս Հախպատայ ի 20 դեկտ. 1824 Վամի յԱռաքել արքեպիսկոպոսէ. ձեռնադրեալ է սարկաւագ ի 20 հոկտ. 1831 Վամի, և ի 21 նոյն ամսոյ և Վամի քահանայացեալ է ի Գրիգոր արքեպիսկոպոսէ ի ս. Յովհաննէս եկեղեցւոյ Զորաթան գեղջի, ունի զուստերս Յարութիւն 11 Վամաց, Գեորգ 7 Վամաց, Սահակ 4 Վամաց և զուստր մի Մարիամ 1 Վամաց»: Այս պաշտօնական շտառից երևում է, որ Գարեգին (Գեորգի) ազգանունը ոչ թէ եղել է Մուրատեանց, այլ Գեօրգինեանց, բայց մեր մէջ ընդունուած սխալ սովորութեամբ կոչուել է պապի անունով—Մուրատեանց: Գարեգին մայրը կոչուում էր Մարթալ:

Հոգևոր կոչման նուիրութիւն ցանկութիւն: Ծնողները տեսնելով նորա մէջ սէր և ձգտում դէպի ուսումն՝ տուին նորան Սանահնի վանքի ժառանգաւորաց դըպրոցը, ուր երկու տարի մնալով ուսաւ այնտեղ աւանդուող բոլոր աւարկանները և բաւական հմտանալով հայերէն լեզուի և կրօնի ուսման մէջ՝ յաջողութեամբ աւարտեց յիշեալ դպրոցը: Սանահնի վանական դպրոցից դուրս գալով՝ նա գիտէր արդէն Չամչեան քերականութեան առաջին մասը, գիտէր թարգմանել Նոր Կտակարանից՝ չորս աւետարանները և Գործք Առաքելոցը, իսկ Հին Կտակարանից՝ Ծննդոց և Ելից գրքերը և բաւական անսխալ գրել:

Այդ ժամանակները, ինչպէս յայտնի է, նոր էր բացուել Ներսիսեան ազգային Հոգևոր դպրոցը և միակ տեղն էր Կովկասում, ուր հայ տղայք հայկական ուսում կարող էին ստանալ: Դպրոցի հիմնադիր Տ. Ներսէս V կաթողիկոսը հրամայել էր՝ գիւղական քահանաների որդւոց բերել իւր կառուցած ուսումնարանը, ուր պիտի պատրաստուէին նոքա ապագայում քահանաներ լինելու իրանց գիւղերում: Ամեն կողմից գունդագունդ ծնողները իրանց երեխաների ձեռից բռնած շտապում էին տեղաւորել հայկական այդ լուսաւորութեան տաճարը: Ահա այդտեղ բերուեցաւ և փոքրիկ Գարեգինը, որ 12 տարեկան էր դեռ և տեղաւորուեցաւ Ներսիսեան Դպրոցի երկրորդ դասարանը: Այդ էր 1848 թուին:

Գարեգինը սկսեց լառաջադիմութիւն ցոյց տալ և այդտեղ, որպէս ուշիմ և աշխատասէլ աշակերտ, այնպէս որ մինչև անգամ և իրա՝ Ներսէս կաթողիկոսի ուշադրութիւնը գրաւեց:

Այդ ժամանակները Ներսիսեան Դպրոցի տեսուչ կարգուեց աստուածաբան Պետրոս Շանշեանցը, այս հոգեւորացի մարդը, որ իւր կնիքը դրեց մատաղ և շնորհալի Գարեգինի վերայ սորա կեանքի ամբողջ ընթաց-

քում: Աննկարագրելի էր իւր թողած տպաւորութիւնն, «ասում է ինքը Մելքիսեդեկ եպիսկոպոսը Պետրոս Ծան-
«շեանի կենսագրութեան մէջ, հասակն վայելուչ, կե-
«ցուածն վեհ, քաջալանջ, գանգրահեր, տեսքն պայ-
«ծառ, նայուածքն հեզ ու թափանցիկ, արտասանու-
«թիւնն քողցւալուր, խօսքերն հոգեբոլոր: Այս հրեշտա-
«կատեսիլ անձն էր Պետրոս Ծանշեանց, նոր տեսուչն
«վարժարանին... Առաջին վայրկենէն աշակերտք գրա-
«ւուած էին. առաջին տեսութենէն քաջալերուած էին
«յառաջդիմելու... Համակրութիւնն ու ցնծութիւնն
«ընդհանուր էր...»:

Ծանշեանի խորհրդով Ներսէս V-ը իւր ուսումնա-
րանում բաց է անում գիշերօթիկների համար ուղեգրա-
նոց և տասը որդեգիր ընտրելով՝ սոցանից մէկը լինում
է Գարեգին Մուրատեանը:

Ներսէս կաթուղիկոսը իւր դպրոցի աշակերտներին
գործնական եղանակով պատրաստելու համար եկեղեցուն
և ժողովրդին ծառայելու գործի համար, նոցա վաղօրօք
վարժեցնելու բեմբասացութեան մէջ՝ կարգադրում է,
որ նոցանից ընդունակներն ու լառաջադէմները տեսչի
ցուցումներով ամեն կիրակի սպասաւորեն քաղաքիս ե-
կեղեցիներում և քարոզեն այնտեղ. այդ պատուէրը
կրկնել էր Ներսէս V-ը 1854 թուի մարտի 11 № 111
կոնդակով, որով պատուիրում էր հոգաբարձութեան նո-
րոգել այդ գեղեցիկ սովորութիւնը և հոգաբարձութիւ-
նը նոյն թուի ապրիլի 22-ին № 88 թղթով ուղարկում
է Կոնստանդնուպոլիս 45 աշակերտների ցուցակ բաժա-
նուած ըստ եկեղեցեաց, որոնք պիտի ծառայէին եկե-
ղեցիներում և քարոզէին՝ դասերից ազատ ժամերին:
Այդ աշակերտներից էր և Գարեգին Մուրատեանը, ինչ-
պէս նաև Յովհաննէս (Պերճ) Պաօշեանը և ուրիշներ:
Գարեգինը քարոզում էր Վանքի եկեղեցում իրան՝ Ներ-
սէս կաթուղիկոսի ներկայութեամբ և նորա հմտալից

և սրտաբուրդի խօսքերը ոգևորում են և հիացնում ժողովրդին: Այդպիսի քարոզներից մէկից յետոյ կաթուղի կոսը տանելով նորան իւր մօտ ճաշի՝ ուրար է տալիս նորան և գուշակում է, որ մի օր Գարեգինը պէտք է լինի մեր նշանաւոր հոգեւորականներից մէկը:

Գարեգինը աւարտեց Ներսիսեան դպրոցը լաւ հայագէտի և ընտիր քարոզչի համբաւով:

Այնուհետեւ նա նշանակուեցաւ նոյն Դպրոցում վերակացու և ուսուցիչ հայոց լեզուի և հայոց պատմութեան:

Գարեգինը Ներսիսեան դպրոցում լաւ անուն թողեց, եռանդուն բնաւորութիւն և բուն հայ հոգի ունենալով նա յետ չէր մնում իւր մեծ ուսուցչից՝ Պ. Շանշեանից. նա նշանակւում է այնտեղ տեսչի օգնական և առնելով իւր ձեռքը դպրոցի ուսումնական մասի ղեկը՝ գարկ է տալիս կրթական գործին, սահմանում է գրական երեկոյթներ, դասախօսութիւններ է կարդում ինքը, նոյնը անել է տալիս բարձր դաստան աշակերտներին և պահպանելով Ներսէս կաթուղիկոսի և Շանշեանցի կարգադրութիւնը՝ այդ աշակերտներին քարոզիչներ է նշանակում քաղաքիս բոլոր եկեղեցիներում:

Բայց Գարեգնի գործունէութիւնը չէր սահմանափակւում միայն Ներսիսեան դպրոցում պաշտօնավարութեամբ. նա մասնաւոր դասեր էր տալիս քաղաքիս շատ տներում հայոց լեզուից ու հայ պատմութիւնից և թուաբանութեան ուսուցիչ էր Տիրուհի Մամիկոնեանի մօտ. նուոր օրիորդական դպրոցում, ուր առաջին անգամ բաղդ ունեցաւ տողերիս գրողը տեսնել նորան ¹⁾: Նա

¹⁾ Տիրուհի Մամիկոնեանը 60-ական թուականների սկզբին իւր բնակարանում պահում էր առանձին օրիորդական ուսումնարան, ուր սովորում էին մօտ 40 հայ աղջկերք բոլորովին ձրիաբար: Այդ ուսումնարանը գտնւում էր այժմեան Մուխ-

գործում էր և գրական ասպարիզում. որի մասին կիս-սենք լետու:

1861 թուին Շանշեանցը, շուշեցիների ցանկութեան համաձայն, նշանակուեցաւ Արցախու Եղիշեան դպրոցի տեսուչ. և 1864-ին Գարեգին Մուրատեանը թողնելով Ներսիսեան Հոգեւոր Դպրոցը, ըստ հրաւերի իւր սիրելի ուսուցչի, մեկնում է Շուշի իբրեւ օգնական պ. Շանշեանցի, ուր նոյնպէս մեծ եռանդով իւր բոլոր ոյժերը գործ է դնում հայ երեսւնների կրթութեան համար. այնտեղ ևս նա դաս էր տալիս հայոց լեզուն ու հայ պատմութիւնը և այդ երկու սրտակիցների անդու աշխատութեամբ յառաջագիւմում է ու բարգաւաճում Շուշուայ դպրոցը նիւթապէս և բարոյապէս:

Այդ միջոցին Շուշում մի քանի չարասէր և չարա-

րանեան փողոցում Շահրիմանեանի տանը, Գարեգին վարժապետը թուարանութեան ուսուցիչ էր այնտեղ և կարելի է ասել՝ դպրոցի հոգին: Այդտեղ էին սովորում օր. օր. Աշխէն և Աննա (ապա տ. Պռօշեան) Գօլգեանները, օր. Հեղինէ Տէր Գրիգորեան (ապա տ. Յովհաննանեան) և ուրիշ շատերը: Մենք ևս բնակւում էինք միենոյն բակում: Այլինէի 7 տարեկան և դասի ժամանակ, երբ դասատան դուռը բաց էր լինում, կանգնում էի դռանը և լսում: այդպիսով սովորել էի ինքս ինձ՝ կարգալ ու գրել: Յիշում եմ ինչպէս այսօր, որ մի օր Գարեգին վարժապետը թուարանութեան դաս ունէր. աշակերտուհիներին մէկ մէկ կանչում էր դրատախտակի մօտ և խնդիր էր վճռել տալիս. ի՛նչպէս էր պատահել՝ այդ օրը՝ ոչ որ դաս չէր սովորել. զայրացաւ վարվումն Գարեգին վարժապետը և դուրս վազելով պատշգամբը բռնեց թևիցս ու ներս տանելով ինձ դրատախտակի մօտ, կաւիճը տուեց ձեռս և առաջարկեց ինձ նոյն խնդիրը վճռել: Զգիտեմ ինչպէս եղաւ, որ այդ խնդիրը ես վճռեցի: Իսկոյն Գարեգինը ձեռք տարաւ գրպանը, քսակը հանեց և միջից մի թուղթ մանէթանոց հանելով՝ լեզուով թաց արեց, կպցրեց ճակատիս ու տուն ուղարկեց: Այդ օրից ես համարուեցայ աշակերտ այդ օրիորդական ուսումնարանի, որտեղից հետեւեալ տարին ուղարկուեցայ Ներսիսեան Դպրոց:

միտ մարդիկ գաղտնի սկսել էին որոգալթներ լարել Շանշեանի, ուրեմն և նորա խմբի դէմ, այդ խմբակի պարագլուխը համարուում է մի բարձրաստիճան հոգեւորական՝ Սարգիս Արքեպիսկոպոս Զալաեանը. իսկ մէջ տեղը երևում էր Արցախու թեմի ժամանակաւոր կառավարիչ Գէորգ վարդապետ Արամեանցը, որ վերջը կախուեցաւ: Սոքա չարախօսել էին Տ. Մատթէոս կաթողիկոսի առաջ, թէ Շանշեանի կրօնի դասագիրքը անհարգատ է, թէ նա ուսուցանում է բողոքականութեան հոգւով և այլն: Թողովուրդը չարաչար յուզուելով՝ պատգամաւորութիւն է ուղարկում էջմիածին և ստիպում է իրան Շանշեանին ևս գնալ ներկայանալ Վեհափառ կաթողիկոսին և անձամբ բացատրութիւններ տալ: Ահա այդ ճանապարհորդութեան ժամանակ միանում է Շանշեանի հետ և իւր սիրելի աշակերտն ու պաշտօնակիցը՝ Գարեգին Մուրատեանը, ուր յաջողութիւն չգտնելով՝ Գարեգինն ևս ստիպւում է հրաժարուել Ղարաբաղի դպրոցից իւր ուսուցչի հետ միասին:

«Երբ վերադարձաւ ի Խիֆլիս, ասում է սրբ. Մուրատեանը իւր՝ Պ. Շանշեանի կենսագրութեան մէջ, տեսաւ որ Շանշեանցն ջերմօրէն թախանձում է քաղաքի «ուսն» որ դասէն մասնաւոր վարժարան բանալ իրենց «գաւակաց կրթութեան համար: Տեսայ որ կատարուում «են հարցաքննութիւններն ներսիսեան դպրանոցի, որ «գրեթէ հայրական տուն էր ինձ համար, ուր շուրջ «16 տարիներ բնակած էի, իբրև նախկին գիշերօթիկ «սան, իբրև ուսուցիչ և աւագ վերակացու, իբրև պաշտօնակատար տեսչի, և ուր ծանօթ էին ինձ նոյն իսկ «քննութեան ենթարկուած աշակերտներն, որոնք ան«պատմելի սիրով նայում էին ինձ վերայ, կարծելով «թէ վերստին պիտի սկսեմ պաշտօններս: Սակայն ես այլ «մտախոհութեան մէջ էի, ոչ մի բան չէր գրաւում «սիրտս, ոչ պ. Շանշեանցի մտադրած վարժարանի և ոչ

«Ներսիսեան դպրանոցի վերստին պաշտօնավարութիւնն:
«Արձակուրդի օրերն էին արդէն, մի օր սիրտս բացի
«Իմ սիրելի դաստիարակին և ասացի թէ՛ փափաք ու-
«նիմ վեց ամսուան համար ուսումնասիրական ճանա-
«պարհորդութիւն կատարել ի Թուրքիա և յայլ տեղիս:
«Զարմացալ, որ հաւանութիւն տուաւ մտադրու-
թեանս...»:

1865 ին Գարեգինը դուրս գնաց Թիֆլիսից դէպի
Տաճկահայաստան իւր մտադրուած գաղափարը իրագոր-
ծելու նպատակով:

Գիւլս Ա. Բահ. Աղանեանց

(Վերջը միւս անգամ)

